Արձանագրություն 3

ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/31 **ծածկագրով Արարատ համայնքի Արարատ քաղաքի նոր սպորտդպրոցի կառուցման աշխատանքների նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված Հրատապ բաց մրցույթի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

Ք. Արարատ 25.06.2026թ.
Ժ. 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Նունե Կարապետյան (ԳԱ)
Հանձնաժողովի անդամներ՝ Արտակ Զաքարյան (ԳԱ)
Արմեն Մարտիրոսյան (ԲԱ)
Հակոբ Սեդրակյան (ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Կարեն Մելքոնյան (ՄՀՄ)
Բացակայում է՝ Կարեն Քենդրջյան (ԳԱՊ)

1 Ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով սույն ընթացակարգի հրավերով սահմանված ոչ գնային պայմանների գնահատման չափանիշները՝ ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերում արձանագրեց հետևյալը՝

1.1 «Վանարխ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
1. Հայտով ներկայացվել է նախորդող 3 տարիների ընթացքում իրականացված նմանատիպ 1 աշխատանք, այնինչ պահանջվում էր ներկայացնել պատշաճ ձևով իրականացված նմանատիպ առնվազն 3 աշխատանք: 2. Հայտում բացակայում է ներկայացված աշխատանքներից որևէ մեկին տրված համապատասխան պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը: 3. Հայտում բացակայում է ներկայացված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերից՝ ԲՈՒՀ-ի կողմից շնորհված դիպլոմը:

1.2 «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում արձանագրվեց հետևյալ անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ
1. Հայտով ներկայացվել է նախորդող 3 տարիների ընթացքում իրականացված նմանատիպ 1 աշխատանք, այնինչ պահանջվում էր ներկայացնել պատշաճ ձևով իրականացված նմանատիպ առնվազն 3 աշխատանք: 2. Հայտում բացակայում է ներկայացված աշխատանքներից որևէ մեկին տրված համապատասխան պետական համալիր փորձաքննության դրական եզրակացությունը:

1.3 Ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջներով առաջարկել «Վանարխ» ՍՊԸ-ին և «Հալդի Քոնսալթ» ՍՊԸ-ին 1(մեկ) աշխատանքային օրվա ժամկետում մինչև 29.06.2026թ. ժամը 18:00-ն շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ **0**:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

2.1. **ՀՀ ԱՄԱՀ-ՀԲՄԽԾՁԲ-26/31** ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 30.06.2026թ ժամը 11:00-ին, հասցեն ք. Արարատ, Շահումյան 34:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ **0**:

Հանձ. Նախագահ (ԳԱ)՝ _____ Ն.Կարապետյան

Անդամներ՝ (ԳԱ) _____ Ա.Զաքարյան

(ԲԱ) _____ Ա. Մարտիրոսյան

(ԲԱ) _____ Հ.Սեդրակյան

Քարտուղար (ՄՀՄ)՝ _____ Կ. Մելքոնյան